«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
ՀՀ,ք.Երևան 0010,
Տիգրան Մեծի 4.
Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Մուլտի Ուելնես» Կենտրոն» սահմանափակ
պատասխանատվությամբ
ընկերության ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Մուլտի Ուելնես» Կենտրոն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները,որոնք ներառում են առ 31-ի դեկտեմբերի 2020թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը,նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի,սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները,ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները,ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը ու դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության ***«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»*** բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի Էթիկայի կանոնագրքի(ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար,որն ըստ ղեկավարության,անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ Ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը,ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի,երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը,ընդհատել դրա գործունեությունը,կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն,որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից,անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից,և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է,բայց այն չի երաշխավորում,որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը,երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական,երբ խելամտորեն կարող է ակնկալվել,որ դրանք առանձին կամ միասին վերցրած,կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն:

Ի լրումն՝

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը,նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով,և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ,որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է ,քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը,քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն,զեղծարարություն,միտումնավոր բացթողումներ,սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.

- Ձեռք ենք բերում աուդիտին առընչվող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և՝ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- Գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը,ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման

գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ,և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝գնահատում ենք թե՛ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն,որը կարող է էական կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության նկատմամբ: Եթե եզրահանգում ենք,որ առկա է էական անորոշություն,ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին,կամ,երբ այդպիսի բացահայտումները բավարար չեն,ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա:
  Սակայն ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը՝ դադարեցնել գործունեության անընդհատության հիմունքի կիրառումը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը,կառուցվածքն ու բովանդակությունը,ներառյալ՝ բացահայտումները,ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:
  Կառավարման օղակներում գտնվող անձանց,ի թիվս այլ հարցերի,հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների,ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի,ներառյալ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

25 հունիս, 2021թ.

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ

Տնօրեն Ա. Բաբայան

Աուդիտոր Դ. Խաչատրյան